

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Արդույան Ռեֆլանդի քաղաքացի է, ով պատկանում է այդ երկրի հիմնական կրոնական փոքրամասնությանը՝ Ալեմիներին (որևէ այլ կրոնական փոքրամասնություն զգալի քանակի հետևորդներ չունի Ռեֆլանդում):

Ռեֆլանդում կրոնական փոքրամասնությունները զրկված են երկրում պատգամավոր կամ դատավոր լինելու, ինչպես նաև գործադիր իշխանությունում որևէ բարձր պաշտոն զբաղեցնելու իրավունքից, իսկ երկրի օրենսդրությունը արգելում է տվյալ կրոնական փոքրամասնության ծիսակատարությունների հրապարակային կատարումը: Մի շարք միջազգային իրավապաշտպան կազմակերպություններ իրենց զեկույցներում շարունակաբար նշել են Ռեֆլանդում պետության կողմից Ալեմիների իրավունքների խախտումների և նրանց դեմ համակարգային խտրականության մասին:

Ալեմիների կրոնական ծեսերից մեկի շրջանակներում հավատացյալները օգտագործում են խակա բույսից պատրաստված հյուսեր: Խական, չնայած որևէ ապացուցված հոգեներգործուն հատկությունների բացակայությանը, Ռեֆլանդի օրենսդրությամբ ճանաչված է թույլ թմրամիջոց: Ռեֆլանդում թույլ թմրամիջոցների արտադրությունը և պահումը առաջացնում է վարչական պատասխանատվություն, իսկ զգալի չափերով իրացումը՝ քրեական պատասխանատվություն՝ ընդհուպ մինչև 5 տարվա ազատազրկում: Սակայն պատմականորեն Ռեֆլանդի իշխանությունները չեն հետապնդել Ալեմիներին սեփական



Ցուցումներ

Առաջադրանքները նախատեսված են կոնկրետ դասի յուրացման աստիճանը, համապատասխան տեսական նյութի հիման վրա ինքնուրույն վերլուծություն կատարելու, ինչպես նաև գրագետ, հստակ և փաստարկված տեսակետ ներկայացնելու Ձեր կարողությունը ստուգելու/պարզելու համար: Առաջադրանքի գնահատման ամենակարևոր չափանիշներն են կառուցվածքը (արդյո՞ք շարադրանքը պարզ է և հետևողական), հասկացումը (արդյո՞ք առաջադրանքի կատարումը վկայում է մատուցված նյութի հասկացման մասին) և գրելու ոճը (պարզ և մատչելի լեզուն):



Մինչև 240 րոպե

տնամերձ հողամասերում խակա աճեցնելու ու ոչ հրապարակային ծիսակատարությունների ժամանակ դրա հյուսերը օգտագործելու համար:

Ռեֆլանդում գործում են Ալեմիների մի քանի կազմակերպություն, որոնք տարիներ շարունակ խաղաղ միջոցներով պայքարում են հանուն խտրականության վերացման և Ալեմիներին հավասար իրավունքների տրամադրման: Աբդուլան դրանցից մեկի՝ Հարիբ կազմակերպության ակտիվ անդամներից է:

Amnesty International-ի ու Human Right Watch-ի զեկույցների համաձայն այդ կազմակերպություններից առավել ծայրահեղականի՝ Ռուֆիի անդամները իշխանությունների կողմից պարբերաբար ձերբակալվում են ու մի քանի օրից մինչև մի քանի շաբաթ պահվում են բանտախցերում: Այդ ընթացքում նրանք ոստիկանների կողմից ենթարկվում են հոգեբանական ճնշման, բռնությունների, իսկ որոշ դեպքերում նաև՝ խոշտանգումների: Տարիների խաղաղ պայքարից հետո, 2014 թ. ամռանը Ռուֆի կազմակերպությունը որոշել է զինվորականների և ոստիկանության դեմ հարձակումներ կազմակերպել:

Աբդուլայի եղբորորդին Ռուֆի կազմակերպության երիտասարդ ակտիվիստներից է, և նշված որոշումից հետո, որի մասին Աբդունալ տեղյակ էր, խնդրել է Ադուլային իրեն մի քանի օրով ավտոմեքենա տրամադրել՝ առանց պատճառը նշելու: Երկու օր անց Ռուֆիի ակտիվիստները այդ մեքենայում ռումբ են տեղադրել, Ռուֆիի մեկ այլ ակտիվիստ այդ

ավտոմեքենան ոստիկանության բաժնի դիմաց է կայանել, և ոստիկանության ծառայողների հերթափոխի ժամին այն պայթել է: Պայթյունի հետևանքով սպանվել են երկու ու ծանր վիրավորվել են երեք ոստիկան: Երկու քաղաքացի, ովքեր պայթյունի պահին գտնվում էին մեքենային մոտ, նույնպես մահացել են: Ռուֆի կազմակերպությունը իր վրա է վերցրել պայթյունի համար պատասխանատվությունը, և հայտարարել է, որ ցավում է քաղաքացիականների մահվան համար, որը նա դիտում էր դժբախտ պատահար: Սա կազմակերպության կողմից կազմակերպված միակ հարձակումն էր:

Հարձակումից անմիջապես հետո, իշխանությունները սկսեցին կալանավորել կազմակերպության անդամներին, ներառյալ՝ Աբդուլայի եղբորորդուն: Առկա են մարդու իրավունքների ոլորտում մասնագիտացած խմբերի հաշվետվությունները առ այն, որ կալանավորվածները երթարկվել են խոշտանգումների և անհայտացել են: Ռեֆլանդը 1951թ. Կոնվենցիայի և 1967թ. Արձանագրության անդամ պետություն է: Այն նաև վավերացրել է 1984թ. Խոշտանգումների դեմ Կոնվենցիան և 1966թ. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին Միջազգային դաշնագիրը:

Մի քանի որ անց ոստիկանությունը ներխուժեց Աբդուլայի բնակարան, որտեղ նա իր մտերիմների հետ ավանդական ծիսական արարողություն էր կատարում՝ խակայի հյուսերի կիրառմամբ: Ոստիկանությունը առգրավեց խական, ինչպես նաև ձերբակալեց բոլոր ներկաներին: Նրանք բոլորը ենթարկվեցին վարչական պատասխանատվության՝ 5

օրյա վարչական կալանքի (որը վարչական պատասխանատվության առավել խիստ միջոցն է Ռեֆլանդի օրենսդրության համաձայն): Կալանքի ընթացքում Արդուլային շարունակաբար հարցաքննում էին իր եղբորորդու գործունեության և համոզմունքների, ինչպես նաև Ռուֆի կազմակերպության այլ անդամների հետ կապերի առկայության մասին:

Ազատ արձակվելուց հետո ընդհամենը մեկ շաբաթ հետո նա կրկին ձերբակալվեց և 3 օր կալանքի տակ պահվեց առանց որևէ մեղադրանքի, նույնիսկ առանց տեղյակ պահվելու ձերբակալման պատճառի մասին: Նրան հարցաքննեցին իր գործունեության և համոզմունքների, ինչպես նաև Հարիբ կազմակերպության մյուս անդամների մասին: Հարցաքննության ժամանակ նրան շարունակաբար վիրավորանքներ էին հասցնում, ինչպես նաև մի քանի անգամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն են գործադրել նրա հանդեպ:

Ազատ արձակվելուց հետո Արդուլան տեղեկանում է Հայաստանում բնակվող իր մոտ ազգականի մահվան մասին, ու ժամանում է Հայաստան թաղման արարողությանը մասնակցելու նպատակով: Հայաստանում գտնվելու ընթացքում ոստիկանությունը ներխուժում է նրա բնակարան: Ներխուժումից հետո ոստիկանության սպաներից մեկը Արդուլայի կնոջը հայտարարում է, որ բնակարանից առգրավվել է խակայի վերամշակման համար նախատեսված սարք և մեծ քանակով խակա, որն, ըստ ոստիկանության, նախատեսված էր սև շուկայում վաճառելու համար: Արդուլայի

կինը զգուշացնում է նրան իրենց բնակարան ուստիկանության ներխուժման մասին և հորդորում, որ տուն չվերադառնա:

Աբդուլան անմիջապես դիմում է ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայությանը («ՄՊԾ») ապաստանի խնդրանքով: Նա ՄՊԾ-ին տեղեկացնում է իր առաջին ձերբակալության և իր բնակարան երկրորդ այցի մասին, տրամադրելով առաջին ձերբակալության արձանագրության պատճեն: Ապաստանի հայտի քննարկման ընթացքում Աբդուլան չի հայտնում իր եղբորորդու գործունեության և վերջինիս խնդրո առարկա ավտոմեքենան տրամադրելու մասին: Վարույթի ընթացքում հրապարակվում է ՄԱԿ ՓԳՀ զեկույցը Ռեֆլանդում իրավիճակի մասին, որում նշվում է 2014 թ. երկրորդ կեսին Ալեմիների Հարիբ ու Ռուֆի կազմակերպությունների անդամների բազմաթիվ ձերբակալությունների, խոշտանգման ու դաժան վերաբերմունքի դեպքերի, ինչպես նաև խակա բույսի աճեցման ու իրացման համար քրեական հետապնդման մեծաքանակ դեպքերի մասին:

2015 թ. մարտին Աբդուլայի ապաստանի հայցը բավարարվում է:

2015 թ. օգոստոսին Ռեֆլանդում տեղի է ունենում զինված հեղաշրջում, որի արդյունքում իշխանության է գալիս բանակի գեներալների մի խումբ: Նրանք անմիջապես հայտարարում են բոլոր քաղաքացիների (այդ թվում՝ Ալեմիների) հավասար իրավունքների պաշտպանություն ապահովելու և բոլոր ոլորտներում խտրականության վերացման մասին: Ռեֆլանդում շուտափույթ կերպով կատարվում են համապատասխան օրենսդրական

փոփոխություններ: Հեղաշրջումից անմիջապես հետո նախկին իշխանությունների մի շարք բարձրաստիճան ներկայացուցիչներ հայտարարում են պայքար «հակաժողովրդական խոնտայի» դեմ՝ իրենց շուրջ մոբիլիզացնելով առավել ծայրահեղական կրոնական հայացքներ ունեցող բնակիչներին: Նրանք իրենց հավատարիմ մնացած զգալի քանակի ոստիկանական ուժերի և զինվորականների օգնությամբ վերահսկում են Ռեֆլանդի հյուսիս-արևելյան շրջանները: Հին ու նոր իշխանությունների միջև սկսվում է զինված հակամարտություն, որը սակայն մեծ ծավալի չի հասնում, քանի որ կողմերը ակտիվ փորձեր չեն ձեռնարկում գրավել միմյանց կողմից վերահսկվող տարածքները: Հին իշխանությունները նորերին վերջնագիր են ներկայացնում, որով պահանջում են հանձնել իշխանությունը իրենց մինչև 2016 թ. ավարտը, հակառակ դեպքում խոստանալով անցնել լայնածավալ ռազմական գործողությունների: Աբդուլայի բնակարանը գտնվում է երկրի հարավում, որը լիովին վերահսկվում է նոր իշխանությունների կողմից: Ըստ միջազգային մամուլում առկա ռազմական փորձագետների կարծիքների հին իշխանությունների կողմից այդ տարածքները գրավելը շատ քիչ հավանական է, քանի որ նոր իշխանությունները ունեն էական ռազմական առավելություն, ինչպես նաև վայելում են իրենք վերահսկողության տակ գտնվող տարածքի բնակչության մեծամասնության աջակցությունը:

Նոր իշխանությունները անմիջապես ազատ են արձակում Ռուֆի կազմակերպության այն անդամներին, ով անմիջական առնչության չունեն պայթյունի կազմակերպման

հետ: Աբդուլայի եղբորորդին ազատ չի արձակվում: Միաժամանակ մամուլում տեղեկություններ են հայտնվում այն մասին, որ պայթյունի համար օգտագործված ավտոմեքենան պատկանում էր Աբդուլային: Նշված տեղեկությունները հայտնի են դառնում ՀՀ իրավասու մարմիններին:

ՄԱԿ ՓԳՀ հերթական զեկույցը Ռեֆլանդի վերաբերյալ արձանագրում է, որ 2015 թ. Օգոստոսի հեղաշրջումից ի վեր երկրի հարավում որևէ նկատելի հետապնդումներ Ալեմինների ու, մասնավորապես, Հարիբ ու Ռուֆի կազմակերպությունների անդամների դեմ այլևս չեն արձանագրվել: 2016 սկզբին որոշ առաջատար Ռեֆլանդական լրատվամիջոցներ իրենց կայքերում տեղեկություններ են հրապարակում, որ երկրի հարավում պարբերաբար մահացու հարձակումներ են իրականացվում Հարիբ ու Ռուֆի կազմակերպությունների անդամների վրա: Հարձակումների համար պատասխանատվությունը ստանձնում է ծայրահեղական մի խմբավորում, որն ակտիվորեն սատարում է հին իշխանություններին:

Հիմք ընդունելով ՄԱԿ ՓԳՀ վերջին զեկույցը, ինչպես նաև պայթյունի կազմակերպման հետ Աբդուլայի կապի մասին տեղեկությունները, ՄՊԾ-ն նախաձեռնում նրա ապաստանի դադարեցման ու չեղյալ հայտարարելու գործընթաց: Գործընթացի ընթացքում Աբդուլան պնդում է, որ տեղյակ չէր, թե ինչ նպատակով է օգտագործվելու մեքենան:

Առաջադրանք՝

1. Խնդրում ենք, առանց հաշվի առնելու ապաստանի տրամադրումից հետո հայտնի դարձած տեղեկությունները, գնահատել

a. Աբղուլային ապաստանի տրամադրման հիմնավորվածությունը՝ ներառման պայմանների բավարարված լինելու առումով.

b. Ներառման պայմաններին վերաբերող առանձին ապացույցների (Աբղուլայի կողմից տրամադրվող տեղեկություններ, ձերբակալության արձանագրության պատճեն, ՄԱԿ ՓԳՀ զեկույց) ապացուցողական նշանակությունն ու արժանահավատությունը:

2. Խնդրում ենք, հաշվի առնելով ապաստանի տրամադրումից հետո հայտնի դարձած տեղեկությունները, գնահատել

a. Աբղուլայի Փախստականի կարգավիճակը դադարեցնելու և չեղյալ հայտարարելու հիմնավորվածությունը՝ բացառման ու դադարեցման պայմանների առումով.

b. Չվերադարձելիության սկզբունքի կիրառման հիմնավորվածությունը

c. Բացառման ու դադարեցման պայմաններին ու չվերադարձելիությանը վերաբերող առանձին ապացույցների (Աբղուլայի կողմից տրամադրվող լրացուցիչ տեղեկություններ, ՄԱԿ ՓԳՀ նոր զեկույց,

միջազգային մամուլում ռազմական
փորձագետների կարծիքներ, Ռեֆլանդի
լրատվամիջոցների կողմից հրապարակված
տեղեկություններ) ապացուցողական
նշանակությունն ու արժանահավատությունը: